

ԹԻՎ 104 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ

«ԱՇԽԱՐՀԱԳԵՏԻ ԱԿՈՒՄԲ»

Խմբակի

Ծ Ր Ա Գ Ի Ր

շաբաթական 2 ժամ, տարեկան 68ժ

VI-IX դասարաններ

Խմբակի ղեկավար՝ Գ.Գրիգորյան

2023-2024 ուստարի

ԲԱՅԱՏՐԱԳԻՐ

«Աշխարհագետի ակումբ» խմբակի գործունեությունը հնարավորություն է ընձեռում հիմնական դպրոցի սովորողների աշխարհայացքի ձևավորման, աշխարհաճանաչողության գործընթացում:

Խմբակի գործունեությունը խիստ արդիական է, քանի որ ժամանակակից աշխարհում և մեր երկրի առջև ծառայած մարտահրավերներները(քաղաքական, տնտեսական, ռազմական, էկոլոգիական և այլն) ճիշտ գնահատելու, դիմակայելու համար անհրաժեշտ են աշխարհագրական գիտելիքների իմացություն: Այդ նպատակով խմբակում լուծվում են աշխարհագրական գիտելիքների նկատմամբ սովորողների անհատական հետաքրքրությունների զարգացման, նրանց ինքնակրթությանը, մասնագիտական կողմնորոշմանն օգնելու խնդիրներ:

Սովորողներին զինել տարբեր նշանակության և բովանդակության քարտեզներով, վիճակագրական նյութերով աշխատելու հմտություններով: Նպաստել աշխարհագրական մտածողության զարգացմանը, աշխատանքի մեջ քարտեզագրական, օդատիեզերական, վիճակագրական մեթոդների կիրառմանը:

Խմբակի խնդիրներն են՝ սովորողների մեջ բնության հանդեպ սիրո դաստիարակությունը, բնությունից ռացիոնալ օգտվելու հիմունքներից նրանց գիտական գիտելիքների ընդլայնումը, բնության մեջ ինքնուրույն գործնական աշխատանքի զարգացումը և բնության հետ ներդաշնակ ապրելը, կողմնորոշվել արտակարգ իրավիճակներում:

«ԱՇԽԱՐՀԱԳԵՏԻ ԱԿՈՒՄԲ» ԽՄԲԱԿ

<p>Նպատակը</p>	<ul style="list-style-type: none"> • Տալ գաղափար աշխարհագրական գիտության մեջ, աշխարհագրական հետազոտություններում քարտեզների դերի մասին: • Կիրառելով մաթեմատիկական գիտելիքները՝ լուծել աշխարհագրական խնդիրներ: • Կարևորել քարտեզների կիրառման կարողությունը: • Զարգացնել հայրենաճանաչողությունը: • Ձեռք բերել գիտելիքներ ՀՀ ռազմական աշխարհագրության մասին: • Ձևավորել գիտելիքներ արտակարգ իրավիճակներում պատրաստվածության մասին: • Ներկայացնել քարտեզագրական կարողությունների ձևավորում: • Նոր տեխնոլոգիաների կիրառումը քարտեզագրության մեջ: • Ծանոթացնել քարտեզի լեգենդայի կառուցվածքի հետ, քարտեզը «կարդալու», հասկանալու համար: • Տալ գաղափար հորիզոնի կողմերի մասին, զարգացնել կողմնացույցից օգտվելու կարողությունները և հմտությունները: • Ի՞նչ է ազիմուտ, ի՞նչպես շարժվել ազիմուտով: • Տալ պատկերացում հորիզոնականների մասին: • Նկարագրել աստիճանացանցի բաղադրիչները: • Գաղափար ունենալ մասշտաբի տեսակների մասին: • Ծանոթացնել ժամային գոտիների քարտեզին: • Քարտեզի միջոցով վերլուծել իզոթաթների նկարագիրը: • Ծանոթացնել մթնոլորտը ուսումնասիրող սարքերին և նրանց աշխատանքին: • Լուծել մաթեմատիկական խնդիրներ: • Կառուցել և վերլուծել դիագրամներ, կլիմայագրամներ և գրաֆիկներ: • Զարգացնել աշխարհաճանաչողությունը: • Նպաստել օլիմպիադաների մասնակցությանը:
-----------------------	---

Վերջնարդյունք

- Կիրառել քարտեզները արդի կյանքում:
- Կարողանալ մաթեմատիկական գիտելիքները օգտագործել աշխարհագրության մեջ:
- Կիրառել ԳՏՀ-ի, ՏՏ-ի նորությունները:
- Վերլուծել ՀՀ ռազմաքաղաքական իրադրությունը:
- Գնահատել ՀՀ-ի ՔԱԴ-ը և ՏԱԴ-ը արդի աշխարհում:
- Գնահատել քարտեզից օգտվելու և քարտեզներ կազմելու կարողությունը:
- Կարողանալ որոշել հորիզոնի կողմերը, տեղանքում շարժվել ազիմուտով:
- Գործնական խնդիրների լուծում հատակագծի և աստիճանացանցի միջոցով:
- Լուծել մասշտաբների խնդիրներ և այն կիրառել գործնականում:
- Լուծել խնդիրներ ժամային գոտիների տվյալներով:
- Նկարագրել ծովային գլխավոր ուղիները և կարողանալ մտովի՝ քարտեզի օգնությամբ նավարկել:
- Դաշտային հետազոտություն մեթոդով որոշել Գետառի ծախսը:
- Քարտեզագրական նյութերի հիման վրա կատարել տեղանքի պարզագույն հանույթ:
- Կազմել և լուծել աշխարհագրական խաչքառեր:
- Սովորողների աշխարհագրական գիտելիքների, կատարողականների, ճանաչողական հետաքրքրությունների և կայուն իմացական պահանջմունքի ձևավորումը, բնական երևույթների գիտելիքների խորացումը և աշխարհայացքի ընդլայնումը, հայրնասիրության, գեղագիտական, էկոլոգիական ճաշակի և լիարժեք անհատի ձևավորումը:

**ԱՌԱՆՑ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՄԱՑՈՒԹՅԱՆ
ՄԱՐԴ ՄՆՈՒՄ Է ՆԵՂ ԵՎ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ
Ի. ԿԱՆՏ**

№	Թ Ե Մ Ա 1	Ժամ
	ԵՐԿՐԻ ՊԱՏԿԵՐՈՒՄԸ ՔԱՐՏԵԶՆԵՐԻ ԵՎ ԳԼՈՐՈՒՍՆԵՐԻ ՎՐԱ	
1.	Կողմնորոշում տեղանքում կողմնացույցի և տեղական առարկաների միջոցով (գործնական աշխատանք դպրոցամերձ հրապարակում)	4
2.	Ազիմուտ: Ազիմուտի որոշումը կողմնացույցի օգնությամբ (շարժվել ազիմուտով- աշխարհագրական վարժանք)	4
3.	Ռելիեֆի պատկերումը հորիզոնականներով Աշխարհագրական տերմինների բառարան	2
4.	Աստիճանացանց (միջօրեականներ և զուգահեռականներ)	2
5.	Գլոբուսի և քարտեզի վրա հարկավոր կետի գտնելը	2
6.	Քարտեզի մասշտաբների տեսակները (խնդիրների լուծում)	4
7.	Ժամային գոտիներ	2
8.	Գործնական խնդիրների լուծում	4
9.	Քարտեզագրական գիտելիքների կիրառում	2
10.	Ուրվագծային քարտեզների դերը աշխարհագրության ժամերին	2
11.	Զբոսաշրջային ինդուստրիան և աշխարհագրությունը	2
	Թ Ե Մ Ա 2	
	ՋՐՈԼՈՐՏ	
12.	Համաշխարհային օվկիանոսի հատակի ռելիեֆը (իզոբաթներ)	2
13.	Խորությունների չափում (էխոլոտ)	2
14.	Վերտուալ նավագնացություն: Ծովային ջրանցքներ, նեղուցներ, նավահանգիստներ	2
15.	Օվկիանոսների և ծովերի ուսումնասիրության ժամանակակից մեթոդը	2
16.	Ֆիլմի դիտում	2
17.	Գետ: Գետի ծախս , հոսք	2
18.	Դաշտային հետազոտության մեթոդով մոտակա գետի ծախսի որոշում	2

19.	Էքսկուրսիա բուսաբանական այգի	2
	Թ Ե Մ Ա 3	Ժամ
	ՄԹՆՈԼՈՐՏԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ	
20.	Բարոմետր (մթնոլորտային ճնշման չափում)	2
21.	Թերմոգրաֆ (ջերմագրիչ)՝ ջերմության լայնույթ, ընթացք	2
22.	Գործնական խնդիրների լուծում (կլիմայագրամի վերլուծություն)	2
23.	Քամի (հողմացույց, հողմաչափ)	2
24.	Քամիների վարդ	2
25.	Տեղումնաչափ	2
26.	Գործնական խնդիրների լուծում (օդի խոնավություն)	2
27.	Մաթեմատիկական գիտելիքները՝ որպես անհրաժեշտ պայման աշխարհագրական ընկալումներում	2
28.	Էքսկուրսիա օդերևույթաբանական կայան	2
29.	Ինտելեկտուալ խաղ մրցույթ	2
30.	Մասնագիտական կողմնորոշում. այց ԵՊՀ	2
	ԸՆԴԱՄԵՆԸ	68

ՊԱՀԱՆՋՎՈՂ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱ

Աշխարհագետի խմբակի համար պահանջվող նյութատեխնիկական բազան հետևյալն է՝ մասնագիտական գրականություն, թղթեր (A4, A3 ֆորմատների), էլեկտրոնային գրատախտակ, քարտեզներ, ուրվագծային քարտեզներ, կողմնացույց, գլոբուսներ, պրոյեկտոր, տեսաերիզներ, ձայնադարաններ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Տ.Ն. Աջարյան «Քարտեզները և գլոբուսները աշխարհագրության դասին»
2. Տ.Պ . Գերասիմովա «Աշխարհագրություն»
3. Н.М.Бораздинов «Самостоятельные работы учащихся по географии»
4. Ա. Խաչատրյան «Աշխարհագրության խնդրագիրք +»
5. Կ. Հ. Չերքեզյան «Ֆիզիկական աշխարհագրության տեղեկատու համառոտ բառարան»